

Միկրոկազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկ

Բաժին 1. Միկրոկազմակերպություններ

Սույն ձեռնարկի գործողության ոլորտը

1.1 Միկրոկազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկը (այսուհետ՝ Ձեռնարկ) նախատեսված է միկրոկազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Միկրոկազմակերպությունների նկարագրություն

1.2 Միկրոկազմակերպությունն այն կազմակերպությունն է, որը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն չէ և որը հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ 175 միլիոն ՀՀ դրամ,

բ) գործունեությունից հասույթը՝ 350 միլիոն ՀՀ դրամ,

գ) վիճակագրական կոմիտեի սահմանած կարգով հաշվարկված՝ աշխատողների միջին տարեկան թիվը՝ 10:

1.3 Հանրային հետաքրքրություն ներկայացնող է հանդիսանում այն կազմակերպությունը, որը՝

ա) ՀՀ տարածքում արժեթղթերի հրապարակային առաջարկ կատարող անձ կամ հաշվետու թողարկող է, բացառությամբ արժեթղթերի հրապարակային առաջարկ կատարող անձ կամ հաշվետու թողարկող հանդիսացող Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների, որոնց անդամակցում է ՀՀ-ն, կամ

բ) բանկ է, վարկային կազմակերպություն, վճարահաշվարկային կազմակերպություն, ներդրումային ընկերություն, կարգավորվող շուկայի օպերատոր, կենտրոնական դեպոզիտարիա, ապահովագրական ընկերություն, վերաապահովագրական ընկերություն, ապահովագրական բրոքերային կազմակերպություն կամ ներդրումային ֆոնդի կառավարիչ:

1.4 Եթե միկրոկազմակերպության ֆինանսական հաշվետվությունները որակվում են որպես Ձեռնարկին համապատասխանող, ապա դրանք պետք է համապատասխանեն Ձեռնարկի բոլոր պահանջներին:

Բաժին 2. Հայեցակարգեր

Սույն բաժնի գործողության ոլորտը

2.1 Սույն բաժինը նկարագրում է միկրոկազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների նպատակը և ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած հայեցակարգերը:

Միկրոկազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների նպատակը

2.2 Միկրոկազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների նպատակը միկրոկազմակերպության ֆինանսական վիճակի և արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն է:

Ֆինանսական վիճակ

2.3 Միկրոկազմակերպության ֆինանսական վիճակը նրա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի փոխկապակցությունն է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Դրանք սահմանվում են հետևյալ կերպ՝

ա) ակտիվը միջոց է, որը վերահսկվում է միկրոկազմակերպության կողմից՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և, որից ապագա տնտեսական օգուտները ակնկալվում է, որ կհոսեն դեպի միկրոկազմակերպություն:

բ) պարտավորությունը միկրոկազմակերպության ներկա պարտականությունն է, որն առաջանում է անցյալ դեպքերից, որի մարումն ակնկալվում է, որ կհանգեցնի միկրոկազմակերպությունից տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի:

գ) սեփական կապիտալը միկրոկազմակերպության ակտիվների մնացորդային բաժինն է՝ բոլոր պարտավորությունները հանելուց հետո:

2.4 Որոշ հոդվածներ, որոնք բավարարում են ակտիվի կամ պարտավորության սահմանմանը, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կարող են չճանաչվել որպես ակտիվներ կամ պարտավորություններ, քանի որ դրանք չեն բավարարում 2.11-րդ պարագրաֆի ճանաչման չափանիշները:

Ակտիվներ

2.5 Ակտիվի ապագա տնտեսական օգուտը դրա պոտենցիալն է՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցելու դեպի միկրոկազմակերպություն դրամական միջոցների հոսքին: Այդ դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ ակտիվի օգտագործումից կամ դրա օտարումից:

Պարտավորություններ

2.6 Պարտավորության որոշիչ բնութագրերից է այն, որ միկրոկազմակերպությունն ունի որոշակի ձևով գործելու կամ կատարելու ներկա պարտականություն:

2.7 Ներկա պարտականության մարումը սովորաբար ենթադրում է դրամական միջոցների վճարում, այլ ակտիվների փոխանցում, ծառայությունների մատուցում, տվյալ պարտականության փոխարինում մեկ այլ պարտականության հետ, կամ պարտականության փոխարկում սեփական կապիտալի: Պարտականությունը կարող է նաև դադարել այլ ճանապարհով, օրինակ՝ երբ պարտատերը հրաժարվում կամ կորցնում է իր իրավունքները:

Սեփական կապիտալ

2.8 Սեփական կապիտալը ճանաչված ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է:

Ֆինանսական արդյունք

2.9 Ֆինանսական արդյունքը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միկրոկազմակերպության եկամտի ու ծախսերի փոխհարաբերությունն է: Եկամուտը և ծախսերը սահմանվում են հետևյալ կերպ՝

ա) Եկամուտը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տնտեսական օգուտների աճն է ակտիվների ներհոսքի կամ ավելացման, կամ պարտավորությունների նվազման տեսքով, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում ներդրողների կողմից կատարված ներդրումների:

բ) Ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տնտեսական օգուտների նվազումներն են ակտիվների արտահոսքի կամ նվազման, կամ պարտավորությունների ավելացման տեսքով, որը հանգեցնում է սեփական կապիտալի նվազման, բացառությամբ սեփական կապիտալում ներդրողներին կատարված բաշխումների:

2.10 Եկամտի և ծախսերի ճանաչումը ակտիվների և պարտավորությունների ճանաչման և չափման ուղղակի արդյունք է: Եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշները ներկայացված են 2.11-րդ պարագրաֆում:

Ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ճանաչումը

2.11 Ճանաչումը ֆինանսական հաշվետվություններում այն հոդվածները ներառելու գործընթացն է, որոնք բավարարում են ակտիվի, պարտավորության, եկամտի կամ ծախսի սահմանմանը և բավարարում են հետևյալ չափանիշները՝

ա) հավանական է, որ հոդվածի հետ կապված որևէ տնտեսական օգուտ կհոսի միկրոկազմակերպություն կամ կարտահոսի միկրոկազմակերպությունից, և

բ) հոդվածն ունի սկզբնական արժեք (ինքնարժեք), որը կարող է արժանահավատորեն չափվել:

Ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի չափումը

2.12 Չափումն այն դրամային գումարի որոշման գործընթացն է, որով միկրոկազմակերպությունն իր ֆինանսական հաշվետվություններում չափում է ակտիվները, պարտավորությունները, եկամուտը և ծախսերը: Ձեռնարկը սահմանում է, թե միկրոկազմակերպությունը որ չափման հիմունքը պետք է կիրառի ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի համար:

Հաշվեգրման հիմունք

2.13 Միկրոկազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը: Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի դեպքում գործառնությունների և այլ դեպքերի հետևանքները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում (և ոչ թե՛ երբ դրամական միջոցները ստացվում կամ վճարվում են) և դրանք գրանցվում են հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում և ներկայացվում են այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են:

Շահույթ կամ վնաս

2.14 Շահույթը կամ վնասը եկամտի և ծախսերի թվաբանական տարբերությունն է:

Բաժին 3. Ֆինանսական հաշվեգրվություններ

Սույն բաժնի գործողության ոլորտը

3.1 Սույն բաժինը ներկայացնում է ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը:

Հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը

3.2 Միկրոկազմակերպությունը պետք է ներկայացնի ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը տարեկան կտրվածքով: Միկրոկազմակերպությունն իր հայեցողությամբ ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարող է ներկայացնել նաև հաշվետու տարուց փոքր՝ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանների համար:

Համադրելի տեղեկատվություն

3.3 Միկրոկազմակերպությունը պետք է բացահայտի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ համադրելի ժամանակաշրջանին վերաբերող համադրելի տեղեկատվությունը:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը

3.4 Միկրոկազմակերպության ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը ներառում է՝

- ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ.
- բ) ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ֆինանսական հաշվետվությունների նույնականացում

3.5 Միկրոկազմակերպությունը միևնույն փաստաթղթում ֆինանսական հաշվետվություններից յուրաքանչյուրը պետք է հստակ նույնականացնի և տարբերակի այլ տեղեկատվությունից:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

3.6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը (երբեմն կոչվում է հաշվապահական հաշվեկշիռ) ներկայացնում է միկրոկազմակերպության ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի փոխհարաբերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացման ենթակա տեղեկատվություն

3.7 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտադիր կիրառման ենթակա ձևը ներկայացված է Ձեռնարկի Ձև 1-ում: Ընդ որում՝ հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների հոդվածները ներկայացվում են միայն այն միկրոկազմակերպությունների կողմից, որոնք հաշվետու տարվա վերջի դրությամբ՝ ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն համարվում են շահութահարկ վճարողներ: Նման պարագայում հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների հաշվառումը պետք է իրականացվի Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի կամ ամբողջական ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

3.8 Հաշվեկշռային արժեքն այն արժեքն է, որով ակտիվները, պարտավորությունները և սեփական կապիտալի բաղադրիչներն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Տարբերակումը ընթացիկի և ոչ ընթացիկի

3.9 Միկրոկազմակերպությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները պետք է ներկայացնի առանձին դասակարգմամբ՝ 3.10-3.13-րդ պարագրաֆների համաձայն:

3.10 Միկրոկազմակերպությունն ակտիվը պետք է դասակարգի որպես ընթացիկ, երբ՝

- ա) ակնկալում է ակտիվն իրացնել կամ մտադիր է այն վաճառել կամ սպառել՝ իր սովորական գործառնական փուլի ընթացքում.
- բ) պահում է ակտիվը հիմնականում առևտրական նպատակներով.
- գ) ակնկալում է ակտիվն իրացնել հաշվետու ամսաթվից հետո տասներկու ամսվա ընթացքում, կամ
- դ) ակտիվը դրամական միջոց է, բացառությամբ, երբ դրա փոխանակումը կամ օգտագործումը՝ պարտավորություն մարելու նպատակով, սահմանափակված է հաշվետու ամսաթվից հետո նվազագույնը տասներկու ամիս:

Ընդ որում՝ հաշվետու ամսաթիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրն է:

3.11 Միկրոկազմակերպությունը բոլոր այլ ակտիվները պետք է դասակարգի որպես ոչ ընթացիկ: Երբ միկրոկազմակերպության սովորական գործառնական փուլը հստակ որոշելի չէ, ընդունվում է, որ դրա տևողությունը պետք է լինի տասներկու ամիս:

3.12 Միկրոկազմակերպությունը պարտավորությունը պետք է դասակարգի որպես ընթացիկ, երբ՝

- ա) ակնկալում է պարտավորությունը մարել իր սովորական գործառնական փուլի ընթացքում.
- բ) պահում է պարտավորությունը հիմնականում առևտրական նպատակներով.
- գ) պարտավորությունը ենթակա է մարման հաշվետու ամսաթվից հետո տասներկու ամսվա ընթացքում, կամ
- դ) միկրոկազմակերպությունը չունի անվերապահ իրավունք՝ հետաձգելու պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո նվազագույնը տասներկու ամիս:

3.13 Միկրոկազմակերպությունը բոլոր այլ պարտավորությունները պետք է դասակարգի որպես ոչ ընթացիկ:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

3.14 Միկրոկազմակերպությունն իր ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում ճանաչված եկամտի և ծախսի բոլոր հոդվածները: Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության պարտադիր կիրառման ենթակա ձևը ներկայացված է Ձեռնարկի Ձև 2-ում: Ընդ որում՝ շահութահարկի գծով ծախսի հոդվածը ներկայացվում է միայն այն միկրոկազմակերպությունների կողմից, որոնք հաշվետու տարվա վերջի դրությամբ՝ «՝ հարկային օրենսգրքի համաձայն համարվում են շահութահարկ վճարողներ: Նման պարագայում շահութահարկի գծով ծախսի հաշվառումը պետք է իրականացվի Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի կամ ամբողջական Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Ծախսերի բաժանում

3.15 Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ծախսերի բաժանումը պետք է ներկայացվի՝ օգտագործելով միկրոկազմակերպությունում ծախսերի գործառույթի վրա հիմնված դասակարգումը: Այս դասակարգման համաձայն՝ ծախսերը դասակարգվում են ըստ գործառույթի՝ որպես ինքնարժեքի մաս, կամ, օրինակ՝ իրացման կամ վարչական գործունեության ծախսեր:

Բաժին 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, գնահատումներ և սխալներ

Սույն բաժնի գործողության ոլորտը

4.1 Սույն բաժինը տրամադրում է մոտեցումներ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար օգտագործվող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման վերաբերյալ: Այն նաև անդրադառնում է հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններին և նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում սխալների ուղղումներին:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառում

4.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը որոշակի սկզբունքներ, հիմունքներ, եղանակներ, կանոններ և արարողակարգեր են, որոնք կիրառվում են միկրոկազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու նպատակով:

4.3 Եթե Ձեռնարկը կոնկրետ անդրադառնում է որևէ գործառնության, այլ դեպքի կամ իրադարձության, միկրոկազմակերպությունը պետք է կիրառի Ձեռնարկի պահանջները:

4.4 Եթե Ձեռնարկը կոնկրետ չի անդրադառնում որևէ գործառնության, այլ դեպքի կամ իրադարձության, միկրոկազմակերպության ղեկավարությունը պետք է կիրառի հետևյալ հիմունքներում ներկայացված համանման և կապակցված հարցերին առնչվող պահանջներն ու մոտեցումները ստորև նշված հերթականությամբ՝

ա) Ձեռնարկ,

բ) Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ,

գ) ամբողջական ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման հետևողականություն

4.5 Միկրոկազմակերպությունն իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը համանման գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների նկատմամբ պետք է կիրառի հետևողականորեն:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

4.6 Միկրոկազմակերպությունը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը պահանջվում է Ձեռնարկով:

4.7 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ չեն՝

ա) հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումն այնպիսի գործառնությունների, այլ դեպքերի կամ իրադարձությունների համար, որոնք իրենց բովանդակությամբ տարբերվում են

նախկինում կատարված գործառնություններից և տեղի ունեցած իրադարձություններից.

- բ) նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումն այնպիսի գործառնությունների, այլ դեպքերի կամ իրադարձությունների համար, որոնք նախկինում տեղի չեն ունեցել:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունների կիրառում

- 4.8 Միկրոկազմակերպությունը հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունները պետք է հաշվառի առաջընթաց՝ նոր քաղաքականությունը կիրառելով փոփոխությունը կատարելու պահից սկսած:

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում

- 4.9 Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունը ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի կամ ակտիվի պարբերաբար սպառվող մեծության ճշգրտումն է, որն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ընթացիկ վիճակի և դրանց հետ կապված ակնկալվող ապագա օգուտների և պարտականությունների գնահատումից: Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններն առաջանում են նոր տեղեկատվության ստացման կամ նոր հանգամանքների առաջացման հետևանքով և, հետևաբար, չեն համարվում սխալների ուղղում: Երբ դժվար է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը տարբերակել հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունից, փոփոխությունը դիտարկվում է հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն:

- 4.10 Միկրոկազմակերպությունը հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը պետք է ճանաչի առաջընթաց՝ նոր գնահատումները կիրառելով փոփոխությունը կատարելու պահից սկսած:

Նախորդ ժամանակաշրջանի սխալների ուղղումներ

- 4.11 Նախորդ ժամանակաշրջանի սխալները միկրոկազմակերպության մեկ կամ մեկից ավելի նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում կատարած բացթողումներն ու սխալներն են, որոնք առաջանում են այն արժանահավատ տեղեկատվությունը չօգտագործելու կամ ոչ ճիշտ օգտագործելու արդյունքում, որը՝

- ա) մատչելի էր, երբ այդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները հաստատվել էին ղեկավարության կողմից.

- բ) կարող էր խելամտորեն ակնկալվել, որ ստացված կլիներ և հաշվի կառնվեր այդ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ներկայացնելիս:

- 4.12 Նման սխալները ներառում են թվաբանական սխալների, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման սխալների, անուշադրության կամ փաստերի սխալ մեկնաբանության հետևանքները և կեղծիքը:

- 4.13 Միկրոկազմակերպությունը պետք է ուղղի որևէ նախորդ ժամանակաշրջանի էական սխալները դրանց հայտնաբերումից հետո հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում չբաշխված շահույթի հաշվին:

Բաժին 5. Ֆինանսական գործիքներ

Սույն բաժնի գործողության ոլորտը

5.1 Սույն բաժինը սահմանում է ֆինանսական գործիքների ճանաչման, չափման և ապահովագրման (ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից դուրսգրման) մոտեցումները:

Սահմանումներ

5.2 Ստորև բերված տերմինները Ձեռնարկում օգտագործվում են հետևյալ իմաստներով՝

Ֆինանսական գործիք՝ պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք:

Ֆինանսական ակտիվ՝ ակտիվ է, որը՝

- 1) դրամական միջոց է.
- 2) մեկ այլ կազմակերպության բաժնային գործիք է.
- 3) մեկ այլ կազմակերպությունից դրամական միջոց ստանալու պայմանագրային իրավունք է:

Ֆինանսական ակտիվների օրինակներ են՝

- ա) դրամական միջոցները.
- բ) ցպահանջ և ժամկետային ավանդները, երբ միկրոկազմակերպությունն ավանդատու է.
- գ) դեբիտորական պարտքերը,
- դ) տրված փոխառությունները.
- ե) ներդրումները մեկ այլ կազմակերպության բաժնային գործիքներում:

Ֆինանսական պարտավորություն՝ մեկ այլ կազմակերպությանը դրամական միջոց տրամադրելու պարտավորություն է:

Ֆինանսական պարտավորությունների օրինակներ են՝

- ա) բանկային վարկը.
- բ) ստացված փոխառությունները և թողարկված պարտատոմսերը.
- գ) լիզինգի գծով պարտավորությունը.
- դ) կրեդիտորական և այլ պարտավորությունները:

Բաժնային գործիք՝ պայմանագիր է, որը հավաստում է միկրոկազմակերպության՝ բոլոր պարտավորությունները հանելուց հետո մնացած ակտիվների բաժնի նկատմամբ իրավունքը:

Բաժնային գործիքների օրինակներ են՝

- ա) բաժնետոմսերը (բաժնեմասերը).
- բ) փայերը:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչումը

5.3 Միկրոկազմակերպությունը պետք է ճանաչի ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սկզբնական չափումը

5.4 Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, միկրոկազմակերպությունը պետք է այն չափի սկզբնական արժեքով, որը գործարքի գինն է: Գործարքի հետ կապված ծախսումները ճանաչվում են որպես ծախս հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետագա չափումը

5.5 Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները չափվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ստորև նշվածների տարբերությամբ՝

ա) գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին (սկզբնական արժեք),

բ) սկզբնական ճանաչման պահին չափված գումարի ցանկացած մարումներ:

5.6 Դեբիտորական պարտքերի դեպքում 5.5-րդ պարագրաֆում որոշված գումարից հանվում է նաև ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով ձևավորված դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի գումարը, եթե միկրոկազմակերպությունը ձևավորել է այդպիսի պահուստ: Ընդ որում՝ դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին հատկացումները ճանաչվում են որպես ծախս հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչումը

5.7 Միկրոկազմակերպությունը ֆինանսական ակտիվը պետք է ապաճանաչի, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ մարվում են:

5.8 Միկրոկազմակերպությունը պետք է ապաճանաչի ֆինանսական պարտավորությունը, երբ այն մարվել է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ ուժը կորցրել է:

Ֆինանսական գործիքի դասակարգումը որպես սեփական կապիտալ

5.9 Սեփական կապիտալը միկրոկազմակերպության ակտիվների մնացորդային բաժինն է՝ բոլոր պարտավորությունները հանելուց հետո: Սեփական կապիտալը ներառում է միկրոկազմակերպության սեփականատերերի կողմից ներդրումները (կանոնադրական կապիտալ), չբաշխված շահույթը (վնասը) և պահուստային կապիտալը:

5.10 Միկրոկազմակերպությունը բաժնետոմսերի կամ այլ բաժնային գործիքների թողարկումը պետք է ճանաչի որպես սեփական կապիտալ, երբ այն թողարկում է այդ գործիքները, և մեկ այլ կողմ պարտավոր է գործիքների փոխանակման դիմաց միկրոկազմակերպությանը տրամադրել դրամական կամ այլ միջոցներ:

5.11 Միկրոկազմակերպությունն իր սեփականատերերին (իր բաժնային գործիքների տիրապետողներին) հայտարարված շահաբաժինների գումարի չափով պետք է նվազեցնի սեփական կապիտալի բաղադրիչ հանդիսացող չբաշխված շահույթը:

Բաժին 6. Պաշարներ

Սույն բաժնի գործողության ոլորտը

- 6.1 Սույն բաժինը սահմանում է պաշարների ճանաչման և չափման մոտեցումները: Պաշարներն այն ակտիվներն են, որոնք՝
- ա) պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար (վերավաճառքի համար ձեռքբերված ապրանքները, տվյալ միկրոկազմակերպության կողմից թողարկված արտադրանքը, մատուցված ծառայությունը):
 - բ) արտադրության ընթացքում են նման վաճառքի համար (անավարտ արտադրանքը կամ ծառայությունը): կամ
 - գ) հումքի կամ նյութերի ձևով են՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Պաշարների չափումը

- 6.2 Միկրոկազմակերպությունը պաշարները պետք է չափի սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Վերավաճառքի համար ձեռքբերված ապրանքների չափումը

- 6.3 Վերավաճառքի համար ձեռքբերված ապրանքների սկզբնական արժեքը (ինքնարժեքը) ապրանքների ձեռք բերման ծախսումների հանրագումարն է: Ապրանքների ձեռքբերման ծախսումները ներառում են՝
- ապրանքների ձեռքբերման գինը,
 - ապրանքների ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են միկրոկազմակերպությանը ետ վերադարձման),
 - ապրանքների տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների ձեռքբերման հետ:

Ձեռքբերման ծախսումները չեն ներառում առևտրային գեղչերը և գների իջեցումները:

Թողարկված արտադրանքի, մատուցված ծառայության չափումը

- 6.4 Թողարկված արտադրանքի, մատուցված ծառայության սկզբնական արժեքը (ինքնարժեքը) արտադրանքի թողարկման, ծառայությունների մատուցման ծախսումների հանրագումարն է: Թողարկված արտադրանքի, մատուցված ծառայության ծախսումները ներառում են՝
- ա) արտադրանքի թողարկման, ծառայության մատուցման համար օգտագործված հումքի և նյութերի ձեռքբերման ծախսումները, և
 - բ) արտադրական գործընթացում օգտագործված՝ «ա» կետում նշված հումքի և նյութերի արտադրական (վերամշակման) ծախսումները:

Հումքի և նյութերի ձեռքբերման ծախսումներ

- 6.5 Արտադրանքի թողարկման, ծառայության մատուցման համար ձեռք բերված հումքի և նյութերի ձեռքբերման ծախսումները ներառում են՝
- հումքի և նյութերի ձեռքբերման գինը,

- հումքի և նյութերի ներկրման տուրքերը, հարկերը պարտադիր այլ վճարները (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են միկրոկազմակերպությանը ետ վերադարձման),
- հումքի և նյութերի տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են պաշարների ձեռքբերման հետ:

Ձեռքբերման ծախսումները չեն ներառում առևտրային գեղչերը և գների իջեցումները:

Արտադրական (վերամշակման) ծախսումներ

- 6.6 Արտադրական (վերամշակման) ծախսումները ներառում են արտադրանքի թողարկման, ծառայությունների մատուցման հիմնական արտադրական ծախսումներ և վերադիր արտադրական ծախսումներ:
- 6.7 Հիմնական արտադրական ծախսումներն այն ծախսումներն են, որոնք անմիջականորեն կապված են տվյալ արտադրանքի թողարկման, ծառայության մատուցման տեխնոլոգիական գործընթացի հետ: Հիմնական արտադրական ծախսումների թվին են դասվում, մասնավորապես՝
- հումքի և նյութերի ծախսումները, որոնք անմիջականորեն օգտագործվում են արտադրանքի թողարկման, ծառայությունների մատուցման գործընթացում,
 - հիմնական արտադրական աշխատողների աշխատանքային ծախսումները: Հիմնական արտադրական աշխատողներ են համարվում այն աշխատողները, որոնք անմիջականորեն ներգրավված են արտադրանքի թողարկման, ծառայությունների մատուցման գործընթացում,
 - բուն արտադրանքի թողարկման, ծառայությունների մատուցման գործընթացում օգտագործվող հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսումները.
 - բուն արտադրանքի թողարկման, ծառայությունների մատուցման համար ձեռքբերված ծառայությունների գծով ծախսումները:
- 6.8 Վերադիր արտադրական ծախսումները բոլոր արտադրական ծախսումներն են՝ բացառությամբ հիմնական արտադրական ծախսումների: Վերադիր արտադրական ծախսումների թվին են դասվում, մասնավորապես՝
- օժանդակ նյութերի ծախսումները,
 - հիմնական չհանդիսացող արտադրական աշխատողների աշխատանքային ծախսումները (օրինակ՝ արտադրական ստորաբաժանման ղեկավար անձնակազմի, արտադրության սպասարկող անձնակազմի աշխատանքային ծախսումները),
 - արտադրամասի շենքի, արտադրությանը սպասարկող հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսումները,
 - սպասարկող արտադրամասերի ծախսումները.
 - ընդհանուր նշանակության արտադրական բնույթի ծառայությունների գծով ծախսումները:

Արտադրական (վերամշակման) ծախսումների վերագրումը թողարկվող արտադրանքին

- 6.9 Եթե արտադրության գործընթացի արդյունքում արտադրվել է մեկ արտադրատեսակ (մատուցվել է մեկ ծառայություն), ապա և հիմնական, և վերադիր արտադրական ծախսումները (բացառությամբ 6.11-րդ պարագրաֆում նշվածների) ուղղակիորեն վերագրվում են տվյալ թողարկված արտադրանքին (մատուցված ծառայությանը):
- 6.10 Եթե արտադրության գործընթացի արդյունքում արտադրվել է մեկից ավելի արտադրատեսակ (մատուցվել է մեկից ավելի ծառայություն), ապա
- ա) արտադրական ծախսումները (բացառությամբ 6.11-րդ պարագրաֆում նշվածների), որոնք կարող են ուղղակիորեն վերագրվել արտադրատեսակին (ծառայությանը), ուղղակիորեն վերագրվում են յուրաքանչյուր արտադրատեսակին (ծառայությանը),
 - բ) արտադրական ծախսումները (բացառությամբ 6.11-րդ պարագրաֆում նշվածների), որոնք ուղղակիորեն վերագրելի չեն արտադրատեսակին (ծառայությանը), խելամիտ և հետևողական հիմունքով բաշխվում են յուրաքանչյուր արտադրատեսակին (ծառայությանը): Բաշխումը կարող է կատարվել, օրինակ, յուրաքանչյուր արտադրատեսակի (ծառայության) վաճառքի ծավալի հիման վրա:

Պաշարների սկզբնական արժեքում (ինքնարժեքում) չներառվող ծախսումներ

- 6.11 Պաշարների սկզբնական արժեքում (ինքնարժեքում) չներառվող և դրանց կատարման ժամանակաշրջանում ծախս ճանաչվող ծախսումների օրինակներ են՝
- ա) գերնորմատիվային ծախսումները՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերաճախսի հետ.
 - բ) պահպանման ծախսումները, բացառությամբ, եթե դրանք անհրաժեշտ են արտադրության գործընթացի ընթացքում՝ նախքան հաջորդ արտադրական փուլին անցնելը.
 - գ) վարչական ծախսումները.
 - դ) վաճառքի (իրացման) ծախսումները:

Ինքնարժեքի բանաձևերը

- 6.12 Միկրոկազմակերպությունը փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների ինքնարժեքը պետք է չափի դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:
- 6.13 Միկրոկազմակերպությունը պաշարների ինքնարժեքը, բացի 6.12-րդ պարագրաֆում նշվածներից, պետք է չափի՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) կամ միջին կշռված արժեքի բանաձևերը:

Որպես ծախս ճանաչելը

- 6.14 Երբ պաշարները վաճառվում են, միկրոկազմակերպությունն այդ պաշարների հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչի որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչում է դրանց հետ կապված հասույթը:
- 6.15 Պաշարների բոլոր կորուստները պետք է ճանաչվեն որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ առաջացել է կորուստը: Պաշարների կորուստներ կարող են առաջանալ պաշարների փչացման, վնասվելու, կոտրման և նմանատիպ այլ պատճառներով:
- 6.16 Որոշ պաշարներ կարող են ընդգրկվել այլ ակտիվների կազմում, օրինակ՝ այն պաշարները, որոնք որպես

բաղադրիչ օգտագործվել են սեփական ուժերով կառուցված հիմնական միջոցների համար: Այլ ակտիվների կազմում ընդգրկված պաշարները հետագայում հաշվառվում են Ձեռնարկի՝ այդ տիպի ակտիվներին վերաբերող բաժնի համաձայն:

Բաժին 7. Հիմնական միջոցներ

Սույն բաժնի գործողության ոլորտը

7.1 Սույն բաժինը կիրառվում է հիմնական միջոցները հաշվառելիս:

7.2 Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք՝

- ա) առկա են ապրանքների կամ ծառայությունների արտադրության (մատուցման) կամ մատակարարման, այլ կողմերին վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար կամ ստացվել են լիզինգի պայմանագրի շրջանակներում,
- բ) ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ տարվա ընթացքում, և
- գ) որոնց արժեքը սկզբնական ճանաչման պահին գերազանցում է հիսուն հազար դրամը:

Հիմնական միջոցների սահմանմանը չբավարարող նյութական ակտիվները հաշվառվում են Ձեռնարկի «Պաշարներ» 6-րդ բաժնի համաձայն:

Ճանաչում

7.3 Միկրոկազմակերպությունը պետք է ճանաչի հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը որպես ակտիվ այն դեպքում, երբ՝

- ա) հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի միկրոկազմակերպություն, և
- բ) միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

7.4 Հիմնական միջոցների որոշ միավորների մասերը կարող են պահանջել պարբերաբար փոխարինում (օրինակ՝ շենքի տանիքը): Միկրոկազմակերպությունը հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին պետք է ավելացնի այդպիսի միավորի փոխարինվող մասի ծախսումները, երբ այդ ծախսումները կատարվում են, եթե ակնկալվում է, որ փոխարինված մասը կապահովի դեպի միկրոկազմակերպություն ապագա օգուտների աճ: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Եթե միկրոկազմակերպության համար փոխարինված մասի հաշվեկշռային արժեքի որոշումն անիրագործելի է, ապա միկրոկազմակերպությունը փոխարինման արժեքը կարող է օգտագործել որպես ցուցանիշ այն բանի, թե ինչպիսին է եղել փոխարինված մասի արժեքը, երբ միավորը ձեռք է բերվել կամ կառուցվել է:

7.5 Հողամասը և շենքերն առանձնացվելի ակտիվներ են, և միկրոկազմակերպությունը դրանք պետք է հաշվառի առանձնացված, նույնիսկ երբ դրանք ձեռք են բերվել միասին:

Չափումը ճանաչման պահին

7.6 Միկրոկազմակերպությունը հիմնական միջոցի միավորը սկզբնական ճանաչման պահին պետք է չափի իր սկզբնական արժեքով:

Սկզբնական արժեքի տարրերը

7.7 Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է բոլոր ներքոթվարկյալները՝

ա) գնման գինը, ներառյալ իրավաբանական և բրոքերային ծառայությունների դիմաց վճարները, ներկրման տուրքերը և գնման չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները.

բ) ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Սա կարող է ներառել տեղանքի նախապատրաստման ծախսումները, տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման սկզբնական ծախսումները, տեղակայման և հավաքման, ինչպես նաև ֆունկցիոնալության թեստավորման ծախսումները:

7.8 Հետևյալ ծախսումները հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքում չներառվող ծախսումներ են, և միկրոկազմակերպությունը դրանք պետք է ճանաչի որպես ծախս, երբ դրանք կատարվում են՝

ա) վարչական և այլ ընդհանուր վերադիր ծախսումները.

բ) փոխառության ծախսումները:

Սկզբնական արժեքի չափում

7.9 Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչման ամսաթվի դրությամբ կանխիկ գնի համարժեքն է:

Ակտիվների փոխանակումներ

7.10 Հիմնական միջոցի միավորը կարելի է ձեռք բերել՝ փոխանակելով ոչ դրամական ակտիվների հետ: Միկրոկազմակերպությունն այդպիսի հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը պետք է չափի հետևյալ կերպ որոշվող արժեքով ստորև նշված հերթականությամբ՝

ա) ձեռք բերված հիմնական միջոցի շուկայական գնով,

բ) տրված ակտիվի շուկայական գնով,

գ) տրված ակտիվի հաշվեկշռային արժեքով:

Չափումը սկզբնական ճանաչումից հետո

7.11 Միկրոկազմակերպությունը հիմնական միջոցների բոլոր միավորները սկզբնական ճանաչումից հետո պետք է չափի սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը:

Մաշվածություն

7.12 Հիմնական միջոցները պետք է մաշեցվեն իրենց օգտակար ծառայության ընթացքում: Օգտակար ծառայությունն այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվը մատչելի կլինի միկրոկազմակերպության կողմից օգտագործելու համար: Հողամասն ունի անսահմանափակ օգտակար ծառայություն, հետևաբար չի մաշեցվում:

7.13 Յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար մաշվածության գումարը պետք է ճանաչվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես ծախս, բացառությամբ երբ Ձեռնարկի մեկ այլ բաժին պահանջում է ծախսումը ճանաչել որպես ակտիվի արժեքի մաս: Օրինակ՝ արտադրական հիմնական միջոցի մաշվածության գումարը ներառվում է պաշարների ինքնարժեքում (տե՛ս Ձեռնարկի 6-րդ բաժինը):

7.14 Միկրոկազմակերպությունն ակտիվի սկզբնական արժեքը պետք է պարբերական հիմունքով բաշխի դրա

օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային (հավասարաչափ) մեթոդը:

7.15 Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարեցվում է, երբ ակտիվն ապաճանաչվում է: Մաշվածության հաշվարկը չի դադարեցվում այն դեպքում, երբ ակտիվը գտնվում է պարապուրդի մեջ կամ հանվում է ակտիվ օգտագործումից, բացառությամբ եթե ակտիվն ամբողջությամբ մաշեցվել է:

7.16 Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը միկրոկազմակերպությունը սահմանում է ինքնուրույն, իսկ դրա անհնարինության դեպքում կիրառում է ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված ժամկետները:

Ապաճանաչում

7.17 Միկրոկազմակերպությունը պետք է ապաճանաչի հիմնական միջոցի միավորը, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) դրա օգտագործումից կամ օտարումից չի ակնկալվում ապագա տնտեսական օգուտների ներհոսք:

7.18 Միկրոկազմակերպությունը հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը պետք է ճանաչի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ այդ միավորն ապաճանաչվում է:

7.19 Միկրոկազմակերպությունը հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից օգուտը կամ վնասը պետք է որոշի որպես միավորի օտարումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն:

Բաժին 8. Ոչ նյութական ակտիվներ

Սույն բաժնի գործողության ոլորտը

8.1 Սույն բաժինը կիրառվում է ոչ նյութական ակտիվները հաշվառելիս:

8.2 Ոչ նյութական ակտիվը ֆիզիկական սուբստանցիայից զուրկ որոշելի ոչ դրամային ակտիվ է: Այդպիսի ակտիվը որոշելի է, երբ այն՝

ա) առանձնացվելի է, այսինքն՝ եթե կարող է առանձնացվել կամ բաժանվել միկրոկազմակերպությունից և վաճառվել, փոխանցվել, տրամադրվել լիցենզիայով, տրվել վարձակալությամբ կամ փոխանակվել, կամ

բ) առաջանում է պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքներից՝ անկախ նրանից, թե արդյոք այդ իրավունքները փոխանցելի են կամ առանձնացվելի են միկրոկազմակերպությունից, կամ այլ իրավունքներից ու պարտականություններից:

8.3 Ոչ նյութական ակտիվները չեն ներառում ֆինանսական ակտիվները:

Ճանաչում

Ոչ նյութական ակտիվների ճանաչման հիմնական մոտեցումները

- 8.4 Միկրոկազմակերպությունը պետք է ճանաչի ոչ նյութական ակտիվը որպես ակտիվ միայն այն դեպքում, եթե՝
- ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի միկրոկազմակերպություն.
 - բ) ակտիվի ինքնարժեքը կամ արժեքը կարող է արժանահավատորեն չափվել, և
 - գ) ակտիվը ոչ նյութական միավորի գծով միկրոկազմակերպության ներսում կատարած ծախքերի արդյունք չէ:

Սկզբնական չափում

- 8.5 Միկրոկազմակերպությունը ոչ նյութական ակտիվը սկզբնապես պետք է չափի սկզբնական արժեքով:

Առանձին ձեռքբերում

- 8.6 Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝
- ա) դրա գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերն ու գնման չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները.
 - բ) ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսում:

Ձեռքբերում՝ պետական շնորհի միջոցով

- 8.7 Եթե ոչ նյութական ակտիվը ձեռք է բերվում պետական շնորհի միջոցով, այդ ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը դրա շուկայական արժեքն է այն ամսաթվի դրությամբ, երբ շնորհը ստացվում է:

Ակտիվների փոխանակումներ

- 8.8 Ոչ նյութական ակտիվը կարելի է ձեռք բերել՝ փոխանակելով ոչ դրամական ակտիվների հետ: Միկրոկազմակերպությունն այդպիսի ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը պետք է չափի հետևյալ կերպ որոշվող արժեքով ստորև նշված հերթականությամբ՝
- ա) ձեռք բերված ոչ նյութական ակտիվի շուկայական գնով,
 - բ) տրված ակտիվի շուկայական գնով,
 - գ) տրված ակտիվի հաշվեկշռային արժեքով:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվներ

- 8.9 Միկրոկազմակերպությունը պետք է ճանաչի ոչ նյութական միավորի գծով իր ներսում կատարած բոլոր ծախքերը՝ որպես ծախս, երբ այն կատարվում է, բացառությամբ երբ այն ձևավորում է մեկ այլ այնպիսի ակտիվի ինքնարժեքի մասը, որը բավարարում է Ձեռնարկի ճանաչման չափանիշները:
- 8.10 Որպես նախորդ պարագրաֆի կիրառման օրինակներ՝ միկրոկազմակերպությունը պետք է ճանաչի հետևյալ միավորների վրա կատարված ծախքերը որպես ծախս և չպետք է ճանաչի այդ ծախքերը որպես ոչ

նյութական ակտիվներ՝

- ա) ներստեղծված ապրանքանիշերը, ֆիրմային նշանները, հաճախորդների ցուցակները և ըստ էության նույնանման միավորները.
- բ) գործունեությունների սկզբնավորման ծախքերը (այսինքն՝ սկզբնավորման հետ կապված ծախսումներ), որը ներառում է հիմնադրման ծախսումները, օրինակ՝ իրավաբանական անձ հիմնադրելու հետ կապված իրավաբանական և գործավարական ծախսումները, նոր արտադրամաս կամ գործունեության նոր տեսակ հիմնադրելու գծով ծախքերը (այսինքն՝ նախագործարկման ծախսումներ) և նոր գործառնություններ ձեռնարկելու կամ նոր արտադրատեսակներ կամ գործընթացներ ներդնելու հետ կապված ծախքերը (այսինքն՝ նախագործառնական ծախսումներ).
- գ) ուսուցման գծով ծախքերը.
- դ) գովազդի և առաջխաղացման գծով ծախքերը.
- ե) ամբողջ կազմակերպության կամ նրա մի մասի գտնվելու վայրը փոխելու կամ վերակազմավորելու գծով ծախքերը:

Նախկինում կատարված ծախսեր, որոնք չպետք է ճանաչվեն որպես ակտիվ

- 8.11 Ոչ նյութական միավորի գծով ծախքերը, որոնք սկզբնապես ճանաչվել են որպես ծախս, ավելի ուշ ամսաթվի դրությամբ չպետք է ճանաչվեն որպես ակտիվի սկզբնական արժեքի մաս:

Չափումը ճանաչումից հետո

- 8.12 Միկրոկազմակերպությունը ոչ նյութական ակտիվները պետք է չափի սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան:

Ամորտիզացիա

- 8.13 Ձեռնարկի նպատակով բոլոր ոչ նյութական ակտիվները պետք է դիտարկվեն որպես սահմանափակ օգտակար ծառայություն ունեցող: Միկրոկազմակերպությունն ինքնուրույն է որոշում ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետը: Պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքներից բխող ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետ է հանդիսանում պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքների ժամկետը:

- 8.14 Եթե ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետը չի կարող գնահատվել, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետը սահմանվում է տասը տարի:

Ամորտիզացիայի ժամկետ և ամորտիզացիայի մեթոդ

- 8.15 Միկրոկազմակերպությունը ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը պետք է բաշխի պարբերական հիմունքով դրա օգտակար ծառայության ընթացքում կիրառելով ամորտիզացիայի հաշվարկման գծային (հավասարաչափ) մեթոդը: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար հաշվարկված ամորտիզացիայի գումարը պետք է ճանաչվի որպես ծախս, բացառությամբ երբ Ձեռնարկի մեկ այլ բաժին պահանջում է ծախսումը ճանաչել որպես ակտիվի արժեքի մաս, օրինակ՝ պաշարների կամ հիմնական միջոցների:

- 8.16 Ամորտիզացիան սկսում է հաշվարկվել, երբ ոչ նյութական ակտիվը մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ամորտիզացիայի հաշվարկումը դադարեցվում է, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Ապաճանաչում

8.17 Միկրոկազմակերպությունը պետք է ապաճանաչի ոչ նյութական ակտիվը և պետք է օգուտը կամ վնասը ճանաչի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) դրա օգտագործումից կամ օտարումից չի ակնկալվում ապագա տնտեսական օգուտների ներհոսք:

8.18 Միկրոկազմակերպությունը ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից օգուտը կամ վնասը պետք է որոշի որպես ոչ նյութական ակտիվի օտարումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն:

Բաժին 9. Վարձակալություն

Սույն բաժնի գործողության ոլորտը

9.1 Սույն բաժինն անդրադառնում է վարձակալության հաշվառմանը, բացառությամբ լիզինգի պայմանագրի: Լիզինգի պայմանագիրը հաշվառվում է Ձեռնարկի «Ֆինանսական գործիքներ» 5-րդ և «Հիմնական միջոցներ» 7-րդ բաժինների համաձայն: Վարձակալությունը համաձայնագիր է, որով վարձատուն վճարի կամ վճարների շարքի դիմաց համաձայնեցված ժամկետի ընթացքում վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը:

Վարձակալի ֆինանսական հաշվետվություններ

Ճանաչում և չափում

9.2 Վարձակալը վարձակալության շրջանակներում վարձավճարները պետք է ճանաչի որպես ծախս (ծախսում) գծային (հավասարաչափ) հիմունքով:

Վարձատուի ֆինանսական հաշվետվություններ

9.3 Վարձակալության հանձնված ակտիվները վարձատուն պետք է արտացոլի իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ըստ ակտիվի բնույթի:

9.4 Վարձակալությունից ստացված եկամուտը վարձատուն պետք է ճանաչի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ գծային հիմունքով, վարձակալության ժամկետի ընթացքում:

Բաժին 10. Հասույթ

Սույն բաժնի գործողության ոլորտը

10.1 Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում միկրոկազմակերպության հիմնական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում մասնակիցների կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի: Սույն բաժինը պետք է կիրառվի հետևյալ գործարքներից և դեպքերից առաջացող հասույթը հաշվառելիս՝

ա) ապրանքների վաճառք.

բ) ծառայությունների մատուցում.

գ) այլ անձանց կողմից միկրոկազմակերպության ակտիվների օգտագործում, որը բերում է տոկոսներ կամ շահաբաժիններ:

Հասույթի չափում

10.2 Միկրոկազմակերպությունը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման արժեքը հաշվի է առնում միկրոկազմակերպության կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

10.3 Միկրոկազմակերպությունը հասույթում պետք է ներառի ստացված կամ ստացվելիք տնտեսական օգուտների միայն այն համախառն ներհոսքը, որը պատկանում է տվյալ միկրոկազմակերպությանը: Միկրոկազմակերպությունը հասույթում չպետք է ներառի երրորդ անձանց անունից հավաքագրված բոլոր գումարները, օրինակ՝ ավելացված արժեքի հարկը:

10.4 Սովորաբար միկրոկազմակերպություններում հասույթի դիմաց հատուցումը կատարվում է դրամական միջոցների տեսքով: Նման դեպքերում հասույթի դիմաց հատուցման արժեքը որոշվում է ստացված կամ ստացվելիք դրամական միջոցների անվանական գումարով: Անվանական գումարը հասույթը հիմնավորող փաստաթղթում նշված գումարն է:

Ապրանքների և ծառայությունների փոխանակումներ

10.5 Միկրոկազմակերպությունը պետք է ճանաչի հասույթ, երբ ապրանքները վաճառվում են կամ ծառայությունները մատուցվում են՝ փոխանակվելով այլ ապրանքներով կամ ծառայություններով: Այդ դեպքում միկրոկազմակերպությունը հասույթը պետք է չափի հետևյալ կերպ որոշված գումարով ստորև նշված հերթականությամբ՝

- ա) ստացված ապրանքների կամ ծառայությունների շուկայական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների գումարով.
- բ) եթե «ա» կետում նշված գումարը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, ապա՝ տրված ապրանքների կամ ծառայությունների շուկայական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների գումարով, կամ
- գ) տրված ակտիվի հաշվեկշռային արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների գումարով:

Ապրանքների վաճառքից հասույթի ճանաչումը

10.6 Միկրոկազմակերպությունն ապրանքների վաճառքից ստացվող հասույթը պետք է ճանաչի, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

- ա) միկրոկազմակերպությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության իրավունքը.
- բ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
- գ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն միկրոկազմակերպություն:

Ծառայությունների մատուցումից հասույթի ճանաչումը

10.7 Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, միկրոկազմակերպությունը պետք է ճանաչի գործարքից հասույթը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա (երբեմն կոչվում է ավարտվածության

տոկոսի մեթոդ): Գործարքի արդյունքը կարող է արժանահավատորեն գնահատվել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

- ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա.
- բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի միկրոկազմակերպություն.
- գ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

10.10-10.12-րդ պարագրաֆները տրամադրում են ավարտվածության տոկոսի մեթոդը կիրառելու ցուցումներ:

10.8 Երբ ծառայությունները տվյալ ժամանակաշրջանի ընթացքում մատուցվել են անորոշ քանակի գործողությունների տեսքով, միկրոկազմակերպությունը ճանաչում է հասույթները նշված ժամանակաշրջանի ընթացքում գծային մեթոդով:

10.9 Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, միկրոկազմակերպությունը պետք է ճանաչի հասույթը միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

Ավարտվածության տոկոսի մեթոդ

10.10 Սույն մեթոդը կիրառվում է ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչելիս:

10.11 Միկրոկազմակերպությունը պետք է որոշի գործարքի կամ պայմանագրի ավարտվածության աստիճանը՝ կիրառելով այն մեթոդը, որն առավել արժանահավատորեն է չափում կատարված աշխատանքները: Հնարավոր մեթոդները ներառում են՝

- ա) տվյալ ամսաթվի դրությամբ կատարված աշխատանքների համար կրած ծախսումների և գնահատված ընդհանուր ծախսումների միջև հարաբերակցությունը: Տվյալ ամսաթվի դրությամբ կատարված աշխատանքների համար կրած ծախսումները չեն ներառում ապագա աշխատանքներին վերաբերող ծախսումները, ինչպիսիք են ծախսումները նյութերի գծով կամ կանխավճարները.
- բ) կատարված աշխատանքների ուսումնասիրությունը.
- գ) ծառայությունների գործարքի կամ պայմանագրի աշխատանքների ֆիզիկական ավարտվածության աստիճանը:

Պատվիրատուների կողմից կատարված միջանկյալ վճարումները և կանխավճարները հաճախ չեն արտացոլում կատարված աշխատանքների փաստացի ծավալը:

10.12 Եթե արդեն իսկ որպես պայմանագրի հասույթ ճանաչված գումարի հավաքագրելիությունն այլևս հավանական չէ, միկրոկազմակերպությունը չհավաքագրվող գումարը պետք է ճանաչի որպես ծախս, այլ ոչ թե պայմանագրի հասույթի գումարի ճշգրտում:

Տոկոսներ և շահաբաժիններ

10.13 Միկրոկազմակերպությունն այլ անձանց կողմից միկրոկազմակերպության ակտիվներն օգտագործելիս առաջացող հասույթները՝ տոկոսները և շահաբաժինները, պետք է ճանաչի, երբ՝

- ա) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի միկրոկազմակերպություն, և

բ) հասույթի գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

10.14 Միկրոկազմակերպությունը հասույթը պետք է ճանաչի հետևյալ հիմունքներով՝

ա) տոկոսը պետք է ճանաչվի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տվյալ փոխառության օրերի քանակը բազմապատկելով փոխառության համաձայնագրից բխող մեկ օրվա տոկոսադրույքով,

բ) շահաբաժինը պետք է ճանաչվի, երբ այն հայտարարվում է:

Բաժին 11. Պետական շնորհներ

Սույն բաժնի գործողության ոլորտը

11.1 Սույն բաժինը սահմանում է պետական շնորհների հաշվապահական հաշվառումը: Պետական շնորհը միկրոկազմակերպությանը ակտիվների փոխանցման տեսքով պետության կողմից տրամադրվող օգնություն է՝ միկրոկազմակերպության գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց:

11.2 Պետական շնորհները չեն ներառում պետական օգնության այն ձևերը, որոնց հնարավոր չէ խելամտորեն որևէ արժեք վերագրել, ինչպես նաև պետության հետ գործարքները, որոնք հնարավոր չէ տարանջատել միկրոկազմակերպության սովորական առևտրային գործարքներից:

Ճանաչում և չափում

11.3 Միկրոկազմակերպությունը պետական շնորհները պետք է ճանաչի հետևյալ կերպ՝

ա) շնորհը, որը ստացողի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են.

բ) շնորհը, որը ստացողի համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է.

գ) ստացված շնորհները, նախքան հասույթի ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն:

11.4 Միկրոկազմակերպությունը շնորհները պետք է չափի ստացված ակտիվի անվանական արժեքով, որը շնորհին ուղեկցող փաստաթղթում նշված գումարն է, իսկ դրա բացակայության դեպքում՝ ստացված ակտիվի շուկայական արժեքով:

Բաժին 12. Փոխառության ծախսումներ

Սույն բաժնի գործողության ոլորտը

12.1 Սույն բաժինը սահմանում է փոխառության ծախսումների հաշվապահական հաշվառումը: Փոխառության ծախսումները տոկոսային և այլ ծախսումներն են, որոնք միկրոկազմակերպությունը կրում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ:

Ճանաչում

12.2 Միկրոկազմակերպությունը բոլոր փոխառության ծախսումները պետք է ճանաչի որպես ծախս՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են:

Բաժին 13. Աշխատակիցների հատուցումներ

Սույն բաժնի գործողության ոլորտը

13.1 Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների՝ ներառյալ տնօրենների և կառավարչական անձնակազմի մատուցած ծառայության դիմաց միկրոկազմակերպության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Աշխատակիցների հատուցումները, որոնք հաշվառվում են սույն բաժնի համաձայն ներառում են՝

ա) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները (բացառությամբ ազատման նպաստների), որոնք ամբողջությամբ մարվում են այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը,

բ) ազատման նպաստները:

Աշխատակիցների հատուցումների ճանաչման ընդհանուր մոտեցումը

13.2 Միկրոկազմակերպությունն աշխատակիցների բոլոր այն հատուցումների ծախսումները, որոնց նկատմամբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միկրոկազմակերպությանը ծառայություններ մատուցելու արդյունքում ձեռք են բերել իրավունք, պետք է ճանաչի՝

ա) որպես պարտավորություն, աշխատակցին ուղղակիորեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե վճարված գումարը գերազանցում է մինչև հաշվետու ամսաթիվը մատուցած ծառայությունից առաջացած պարտականության գումարը, միկրոկազմակերպությունը այդ գերազանցումը պետք է ճանաչի որպես կանխավճար.

բ) որպես ծախս, բացառությամբ երբ Ձեռնարկի մեկ այլ բաժնով պահանջվում է, որ ծախսումը ճանաչվի որպես ակտիվի արժեքի մաս, ինչպիսիք են պաշարները կամ հիմնական միջոցները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների օրինակներ

13.3 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են՝

ա) աշխատավարձերը և պարգևավճարները.

բ) փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները).

գ) ոչ դրամային հատուցումները (ինչպիսիք են բուժսպասարկումը, անվճար կամ մասնակի վճարումով ապրանքների կամ ծառայությունների տրամադրումը) ընթացիկ ժամանակաշրջանում աշխատող աշխատակիցների համար:

Կարճաժամկետ հատուցումների ընդհանուր առմամբ չափումը

13.4 Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միկրոկազմակերպությանը մատուցել է ծառայություն, միկրոկազմակերպությունը 13.2-րդ պարագրաֆի համաձայն ճանաչված գումարները պետք է չափի աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գումարով, որն ակնկալվում է վճարել այդ

ծառայության դիմաց:

Ճանաչում և չափում. Փոխհատուցելի բացակայություններ

- 13.5 Միկրոկազմակերպությունը կարող է փոխհատուցել աշխատակիցների՝ տարբեր պատճառներով առաջացող բացակայությունները, ներառյալ տարեկան արձակուրդը և հիվանդության հետ կապված բացակայությունները: Որոշ կարճաժամկետ փոխհատուցելի բացակայություններ կուտակվում են. դրանք կարող են փոխադրվել հետագա ժամանակաշրջաններ և օգտագործվել այդ ժամանակաշրջաններում, եթե աշխատակիցն ընթացիկ ժամանակաշրջանի իրավունքն ամբողջությամբ չի օգտագործել (օրինակ՝ տարեկան արձակուրդի դեպքում): Միկրոկազմակերպությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ակնկալվող ծախսումները պետք է ճանաչի, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է նրանց հետագա փոխհատուցելի բացակայությունների իրավունքը: Միկրոկազմակերպությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները պետք է չափի գումարով, որը միկրոկազմակերպությունն ակնկալում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքի արդյունքում: Միկրոկազմակերպությունը այդ գումարը պետք է ներկայացնի որպես ընթացիկ պարտավորություն հաշվետու ամսաթվի դրությամբ:
- 13.6 Միկրոկազմակերպությունը պետք է ճանաչի այլ (չկուտակվող) փոխհատուցելի բացակայությունները, երբ բացակայությունները տեղի են ունենում: Միկրոկազմակերպությունը չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ծախսումները պետք է չափի բացակայության ժամանակաշրջանի համար վճարված կամ վճարվելիք գումարով:

Ազատման նպաստներ

- 13.7 Միկրոկազմակերպությունը կարող է օրենսդրությամբ, աշխատակիցների հետ կնքված պայմանագրային կամ այլ համաձայնությամբ պարտավորված լինել վճարումներ կատարել (կամ տրամադրել այլ հատուցումներ) աշխատակիցներին, երբ միկրոկազմակերպությունը դադարեցնում է նրանց աշխատանքը: Այդպիսի վճարումներն ազատման նպաստներ են:

Ճանաչում և չափում. Ազատման նպաստներ

- 13.8 Քանի որ ազատման նպաստները միկրոկազմակերպության համար չեն ապահովում ապագա տնտեսական օգուտներ, միկրոկազմակերպությունը դրանք անմիջապես պետք է ճանաչի որպես ծախս հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:
- 13.9 Միկրոկազմակերպությունն ազատման նպաստները պետք է ճանաչի որպես պարտավորություն և ծախս միայն այն դեպքում, երբ միկրոկազմակերպությունը 13.7-րդ պարագրաֆի համաձայն պարտավոր է վճարել ազատման նպաստներ:
- 13.10 Միկրոկազմակերպությունն ազատման նպաստները պետք է չափի հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարով:

Բաժին 14. Արդարժույթի վերահաշվարկ

Սույն բաժնի գործողության ոլորտը

- 14.1 Սույն բաժինը սահմանում է, թե ինչպես պետք է միկրոկազմակերպության ֆինանսական հաշվետվություններում արտացոլվեն արտարժույթով գործառնությունները:

Ֆունկցիոնալ արժույթ

14.2 Միկրոկազմակերպության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է: Արտարժույթը ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթն է:

Արտարժույթով գործառնությունների արտացոլումը ֆունկցիոնալ արժույթով

Սկզբնական ճանաչում

14.3 Արտարժույթով գործառնությունն այնպիսի գործառնություն է, որը սահմանված է արտարժույթով, կամ որը պահանջում է արտարժույթով մարում, ներառյալ այն գործառնությունները, որոնք առաջանում են, երբ միկրոկազմակերպությունը՝

ա) գնում կամ վաճառում է ապրանքներ կամ ծառայություններ, որոնց գինը սահմանված է արտարժույթով.

բ) ստանում կամ հատկացնում է միջոցներ, որոնց վճարման կամ ստացման ենթակա գումարները սահմանված են արտարժույթով. կամ

գ) այլ ձևով ձեռք է բերում կամ օտարում է ակտիվներ, ստանձնում կամ մարում է պարտավորություններ, որոնք սահմանված են արտարժույթով:

14.4 Միկրոկազմակերպությունն արտարժույթով գործառնությունը սկզբնական ճանաչման պահին պետք է հաշվառի ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքը:

14.5 Գործառնության ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, երբ գործառնությունն առաջին անգամ որակվում է որպես ճանաչման ենթակա՝ Ձեռնարկի համաձայն:

Հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ տեղեկատվության ներկայացում

14.6 Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ միկրոկազմակերպությունը պետք է վերահաշվարկի արտարժույթով դրամային հոդվածները՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Դրամային հոդվածներն առկա արժույթի միավորներ են, ինչպես նաև ակտիվներ և պարտավորություններ, որոնց դիմաց պետք է ստացվեն կամ վճարվեն ֆիքսված գումարով արժույթ:

14.7 Միկրոկազմակերպությունը փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ ժամանակաշրջանում դրանց սկզբնական ճանաչման կամ նախորդ ժամանակաշրջաններում վերահաշվարկման փոխարժեքից, պետք է ճանաչի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Բաժին 15. Հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող դեպքեր

Սույն բաժնի գործողության ոլորտը

15.1 Սույն բաժինը սահմանում է հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող դեպքերը, ինչպես նաև այդ դեպքերի ճանաչման և չափման մոտեցումները:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող դեպքեր

15.2 Հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող դեպքերը և՛ բարենպաստ, և՛ ոչ բարենպաստ դեպքեր են, որոնք տեղի են ունենում հաշվետու ժամանակաշրջանի վերջի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները հաստատվում են միկրոկազմակերպության ղեկավարության կողմից: Կան երկու տեսակի դեպքեր՝

- ա) դեպքեր, որոնք տրամադրում են վկայություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանների վերաբերյալ (հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքեր)։
- բ) դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո առաջացած պայմանները (հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքեր):

Ճանաչում և չափում

Հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքեր

15.3 Միկրոկազմակերպությունը պետք է ճշգրտի իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

15.4 Ստորև բերված են հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերի օրինակներ, որոնք պահանջում են, որ միկրոկազմակերպությունը ճշգրտի իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները կամ ճանաչի նախկինում չճանաչված հոդվածները՝

- ա) հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո կայացված դատարանի վճիռը, որը հավաստում է, որ միկրոկազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուներ ներկա պարտականություն.
- բ) հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղեկատվության ստացումը, որը վկայում է, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքն արժեզրկված էր: Օրինակ՝ հաճախորդի սնանկացումը, որը տեղի է ունենում հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո, սովորաբար հաստատում է, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով կորուստն առկա էր, և միկրոկազմակերպությունը կարիք ունի ճշգրտելու առևտրական դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը.
- գ) կեղծիքների կամ սխալների հայտնաբերումը, որոնք ցույց են տալիս, որ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ չեն:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքեր

15.5 Միկրոկազմակերպությունը չպետք է ճշգրտի իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

15.6 Հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքերի օրինակներ են՝

- ա) ակտիվների խոշոր գնումները,
- բ) հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո բնական աղետների պատճառով արտադրական հզորությունների ոչնչացումը.

- գ) գործունեության (կամ դրա մի մասի) ընդհատման մտադրության մասին հայտարարումը.
- դ) հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո ակտիվների գների կամ արտարժույթի փոխարժեքների անսովոր խոշոր փոփոխությունները.
- ե) խոշոր դատական գործընթացի սկիզբը, որն առաջանում է հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող դեպքերի հետևանքով.
- զ) գումարը, որը հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո դառնում է ստացման ենթակա՝ դատարանի բարենպաստ որոշման կամ վճռի կայացման արդյունքում:

Շահաբաժիններ

15.7 Եթե միկրոկազմակերպությունն իր բաժնային գործիքներ տիրապետողներին շահաբաժիններ է հայտարարում հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո, ապա միկրոկազմակերպությունը չպետք է ճանաչի այդ շահաբաժինները որպես պարտավորություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Բաժին 16. Կապակցված կողմեր

Սույն բաժնի գործողության ոլորտը

16.1 Սույն բաժինը պահանջում է, որ միկրոկազմակերպությունն իր ֆինանսական հաշվետվություններում ներառի տեղեկություններ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների չմարված մնացորդների վերաբերյալ: Միկրոկազմակերպության հետ կապակցված կողմ են հանդիսանում միկրոկազմակերպության տնօրենը և սեփականատերը:

16.2 Կապակցված կողմի գործարքը ռեսուրսների, ծառայությունների կամ պարտականությունների փոխանցում է միկրոկազմակերպության և կապակցված կողմի միջև՝ անկախ վճարի գանձումից:

Ներկայացումը

16.3 Եթե միկրոկազմակերպությունն ունի կապակցված կողմի գործարքներ, ապա այն պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնի տեղեկատվություն այդ գործարքների չմարված մնացորդների և պարտականությունների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են ֆինանսական հաշվետվությունների վրա այդ փոխհարաբերությունների հնարավոր ազդեցությունը հասկանալու համար:

16.4 Ստորև բերված են գործարքների օրինակներ, որոնք սովորաբար կատարվում են կապակցված կողմերի հետ՝

- ա) ապրանքների, արտադրանքի (պատրաստի կամ անավարտ) գնում կամ վաճառք.
- բ) գույքի և այլ ակտիվների գնում կամ վաճառք.
- գ) ծառայությունների մատուցում կամ ստացում.
- դ) վարձակալություններ.
- ե) ֆինանսավորման համաձայնագրերի ներքո միջոցների փոխանցումներ (ներառյալ վարկերը, փոխառությունները և կանոնադրական կապիտալում ներդրումները՝ դրամական միջոցներով կամ բնաիրային տեսքով).
- զ) երաշխիքների կամ գրավի տրամադրում:

Կազմակերպության անվանումը, կազմակերպիչի անունը

Ֆինանսական հաշվետվություններ

հաշվետու ժամանակաշրջանը

Կազմակերպության իրավաբանական հասցեն

Կազմակերպության գործունեության հասցեն

Կազմակերպության հիմնական գործունեության բնույթը

Թվային ցուցանիշների չափման միավորը

հազար դրամ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	Տող	20--թ. (հաշվետու)	20--թ. (նախորդ)
1	2	3	4
ԱԿՏԻՎՆԵՐ			
Հիմնական միջոցներ	010		
Ոչ նյութական ակտիվներ	020		
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	030		
<i>այդ թվում՝ կապակցված կողմերի գծով</i>			
Հետաձգված հարկային ակտիվներ*	031		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ (010+020+030+031)	040		
Պաշարներ	050		
Առևտրային դեբիտորական պարտքեր	060		
Դեբիտորական պարտքեր հարկերի և պարտադիր վճարների գծով	070		
Ընթացիկ ֆինանսական ակտիվներ	080		
<i>այդ թվում՝ կապակցված կողմերի գծով</i>			
Դրամական միջոցներ	090		
Ընդամենը ընթացիկ ակտիվներ (050+060+070+080+090)	100		
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ (040+100)	110		
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	120		
Զբաղիված շահույթ (վնաս)	130		
Պահուստային կապիտալ	140		
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ (120+130+140)	150		
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Երկարաժամկետ պարտավորություններ	160		
<i>այդ թվում՝ կապակցված կողմերի գծով</i>			
Հետաձգված հարկային պարտավորություններ*	161		
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ (160+161)	170		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	180		
Հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություններ	190		
Այլ ընթացիկ պարտավորություններ	200		
<i>այդ թվում՝ կապակցված կողմերի գծով</i>			
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ (180+190+200)	210		
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (170+210)	220		

ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (150+220)	230		
--	-----	--	--

* ներկայացվում են միայն այն միկրոկազմակերպությունների կողմից, որոնք հաշվետու տարվա վերջի դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն համարվում են շահութահարկ վճարողներ

Ղեկավար

ստորագրություն

Անուն Ազգանուն

Գլխավոր հաշվապահ

ստորագրություն

Անուն Ազգանուն

հաստատման ամսաթիվ

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

	Տող	20--թ. (հաշվետու)	20--թ. (նախորդ)
1	2	3	4
ՀԱՍՈՒՅԹ	010		
Ինքնարժեք	020		
Իրացման ծախսեր	030		
Վարչական ծախսեր	040		
Ֆինանսական ծախսեր	050		
Այլ ծախսեր	060		
Այլ եկամուտներ	070		
Շահութահարկի գծով ծախս*	071		
Շահույթ նախքան բաշխումը (010-020-030-040-050-060+070-071)	080		
Շահաբաժիններ՝ հայտարարված հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	090		
Զբաշխված շահույթ (վնաս) (080-090)	100		
Շահաբաժիններ՝ վճարված հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	110		

* ներկայացվում են միայն այն միկրոկազմակերպությունների կողմից, որոնք հաշվետու տարվա վերջի դրությամբ՝ ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն համարվում են շահութահարկ վճարողներ

Ղեկավար

ստորագրություն

Անուն Ազգանուն

Գլխավոր հաշվապահ

ստորագրություն

Անուն Ազգանուն

հաստատման ամսաթիվ